

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿԸ ԳԵՎՈՐԳ ՎԵՀԱՊԵՏՅԱՆԻՆ

Մ. Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» 4-րդ հատորում այս նամակի լիակատար բնագրի փոխարեն տպագրված է «Հորիզոն» թերթում 1916 թվականին հրապարակված նրա ֆոտոպատճենի երկրորդ էջը միայն։ Հակառակ Մ. Նալբանդյանի Ե. Լ. ժ. խմբագրության կողմից արված ենթադրության, այդ նամակը հասցեագրված է եղել ոչ թե Աստրախանի թեմակալ Սատթեոս Վեհապետյանին, այլ նրա եղբորը՝ Գևորգ Վեհապետյանին։ Նամակի գրության պահին վերջինս Ղարաբաղի թեմի առաջնորդն էր։

Նամակը վերծանված է համաձայն նրա ամբողջական բնագրի նմանահանության, որը «Լրաբեր հասարակական գիտությունների» խմբագրությանը հանձնեց ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանը։ Նամակի հետ միասին նպատակահարմար դտանք տպագրելու նաև նրա ֆոտոպատճենը ժամանակակից ուղղագրությամբ։

* * *

Բարձր սրբազան Տեր Վիճակավոր Հայր հառաբակաց.

Իմ տասնամյա ծանոթությունը բարձր սրբազան Մատթեոս Արքեպիսկոպոսի հետ, այլև ձեր քեռորդվո (այժմ քահանա) Կարապետ Թադեոսյանի նամակները դեպի Ձեր բարձր սրբազանությունը, անտարակույս ծանոթություն տուած կլինին Ձեզ իմ մասին։

Գիտելով Ձեր հարակցությունը բարձր սրբազան Մատթեոս Արքեպիսկոպոսի հետ, ես համարել եմ ու համարում եմ ինձ նույնպես բարյացակամ ծանոթ Ձեր բարձր սրբազանության, որպես և նորին բարձր սրբազանության անհույս չեմ, որ կընդունեք իմ առաջարկած անկեղծ սերը և անխարդախ բարեկամությունը։

Հայտնի կլինի Ձեր բարձր սրբազանության, որ Մոսկվայի մեջ հրապարակվում է Հյուսիսափայլ անունով օրագիր, որի ղեկավոր գործակատարը եմք, պ. Նադարյանցը և իմ նվաստությունը. այդ օրագիրը շուտով կմտան յուր երկրորդ տարեկան շրջանի մեջ։ Ամենայն տեղ ուրախությամբ ընդունելություն դտավ մեր մատենադրական գործը, բայց ազգը հավատացած Ձեր բարձր սրբազանության հովուությանը անմասն կացուց յուր անձը այս ազգային գործից։

Մենք ամենեին այդպիսի Կարծիք չունեինք Ղաթսրաղի վերա, որի ազգասիրության և ընթերցասիրության համբավը, վաղուց ահա տարածված էր մեր կողմերում, միայն մեր օրագրի հրատարակությունը դյուրեց մեր բարի հավատը։ Բայց դարձյալ երկբայում եմք, մի դուցե անհաջող դտանվեցանք գործակալի նշանակությամբ, ուստի և այդ կասկածանքը փարատելու համար պարտականություն համարեցինք դիմել դեպի Ձեր բարձր սրբազանության գործակցությանը, լսած լինելով շատ անգամ, թե պատրաստ էիք միշտ ձեռներեց դտանվիլ ազգային հառաջագիմության հետ հարակից գործերի մեջ։

Չենք սխալվում, որ մեր առաջարկությունը ընդունելություն գտանելու է Ձեր առաջև, և Դուք, որպես հոգևոր առաջնորդ մի ամբողջ թեմի, կարող եյրան հառաջացնել եթե միայն կամենաք:

Այսպիսի անդրդվելի հույսի վերա հիմնելով մեր հավատը դեպի Ձեր բարձր սրբազանությունը, ուղարկում եմ 25 հատ տոմսակ, ստանալու գալոց 1859 թվականի Հյուսիսսփայլ օրագիրը, որի գինը ճանապարհի ծախքով հանդերձ է ինն մանեթ ու կես:

Որքան տոմսակ կարողանաք ցրվել նոցա բոլորի հասցեքը ու ստորագրության գները կարող եք ուղարկել իմ վերա. ես ներքևումը դնում եմ հասցես, որ եթե աշխատություն հանձն առնուք օրհնել ինձ մի նամակով իմանաք թե ուր և ինչպես պիտո էր մակագրել: Եթե Ձեր հովվապետական հորդորը ավելի պտուղ բերելու լինի, քան թե մեք տոմսուկ էինք ուղարկած, այդպիսի դեպքում կարող եք ստանալ նորա խնդիրը և հասուցանել ինձ նորա հասցեն ևս ուրիշների հետ միասին, աներկբա մնալով, որ առանց տոմսակի ևս օրագիրը պիտի հասաներ մի այդպիսի պարոնի:

Ավելորդ ենք համարում ասել այստեղ, որ Հյուսիսսփայլը լուռ մնալու չէ գալոց տարու մեջ Ձեր ազգասիրական գործակցության մասին օրագրի հետ, ճանապարհ տալով նորան Ձեր բարձր սրբազանության հավատացած թեմի մեջ:

Խնդրելով Ձեր սրբազանության օրհնությունը և աղոթքը մնամ միշտ պատրաստական խոնարհ ծառա

Միքայել Նալբանդյանց

յ 9. հոկտեմբ.

1858 թիվ

Մոսկվայի

մեջ.

Իմ հասցեն.

Его благородію Михаилу Лазаревичу Налбандьянцу.

В Москве на Никитской улице, в доме княгини Голицыной.

7-11-1859

Handwritten text in a cursive script, likely a letter or document, starting with "Handwritten text" and continuing with several lines of text.

Handwritten text in a cursive script, continuing the letter or document.

Handwritten text in a cursive script, continuing the letter or document.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.

Handwritten text in a cursive script, likely a signature or name.